ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 6 օգոստոսի 2024 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ե. Խունդկարյանի

Անդամակցությամբ՝ Է. Շաթիրյանի

Ս. Սաֆարյանի

Քննության առնելով Վարուժան Մանուկյանի դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Վարուժան Մանուկյանը (այսուհետ՝ Դիմող), դիմելով Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի հուլիսի 25-ին), խնդրել է հետևյալը.

«իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 115-րդ հոդվածի 5-րդ մասը և 265-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 75 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողը, վկայակոչելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը, նշում է, որ վերոնշյալ նորմից հետևում է, որ աշխատողի կողմից գործատուին

գրավոր ծանուցումը պետք է իրականացվի երեսնօրյա ժամկետի պահպանմամբ, ինչն էլ գործատուին տալիս է իրավունք՝ լուծելու աշխատանքային պայմանագիրը երեսնօրյա ժամկետը լրանալուց անմիջապես հետո, այլ ոչ թե ցանկացած պահի:

Միաժամանակ Դիմողը նշում է, որ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան), մեկնաբանելով վերոնշյալ նորմը, գտել է, որ գործատուն պարտավոր է ծանուցման ժամկետի ավարտից հետո՝ անմիջապես հաջորդ օրը, լուծել աշխատանքային պայմանագիրը, իսկ վերաքննիչ դատարանը գտել է, որ գործատուն կարող է ցանկացած ժամանակ լուծել աշխատանքային պայմանագիրը:

Ըստ Դիմողի՝ վերոնշյալ նորմը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որի արդյունքում մի դեպքում գործատուն կարող է աշխատանքային պայմանագիրը լուծել ցանկացած պահի, իսկ մյուս դեպքում էլ պարտավոր է լուծել ծանուցման ժամկետը լրանալու հաջորդ օրն անմիջապես:

Դիմողը, անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասին, նշում է, որ տվյալ նորմից հետևում է, որ աշխատանքը խոչընդոտող հիվանդության դեպքում աշխատողը պետք է գործատուին գրավոր ծանուցի առնվազն հինգ օր առաջ, իսկ գործատուն էլ պետք է լուծի աշխատանքային պայմանագիրը ծանուցմամբ նշված ժամկետում: Միաժամանակ Դիմողը գտնում է, որ նշված հոդվածով բացակայում է պայման առ այն, որ աշխատանքը խոչընդոտող հիվանդության դեպքում աշխատողը գործատուին գրավոր ծանուցելիս պետք է նշի առողջական խնդիրները և ներկայացնի դրանց վերաբերյալ համապատասխան ապացույցներ, իսկ նշվածը չպահպանելու դեպքում էլ գործատուն իրավունք ունի, տվյալ ծանուցումը հիմք ընդունելով, լուծել աշխատանքային պայմանագիրը ցանկացած պահի, այդ թվում՝ ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երեսնօրյա ժամկետը լրանալուց հետո:

Մինչդեռ, Դիմողն ընդգծում է, որ նշված դրույթի առնչությամբ Դատարանի և վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը հանգել է նրան, որ աշխատանքը խոչընդոտող հիվանդության դեպքում աշխատողը գործատուին գրավոր ծանուցելիս պետք է

նշի առողջական խնդիրները և ներկայացնի դրանց վերաբերյալ համապատասխան ապացույցներ, քանի որ հակառակ դեպքում գործատուն ծանուցումը կարող է դիտարկել որպես ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացված դիմում և աշխատանքային պայմանագիրը լուծել երեսնօրյա ժամկետը լրանալուց հետո:

Բացի դրանից, Դիմողը, վկայակոչելով թիվ ԵԿԴ/2335/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը, նշում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանված չեն բավարար հստակությամբ, որի հետևանքով նշված դրույթները մեկնաբանվում են տարբեր կերպ:

Դիմողի կարծիքով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցման գործողության ժամկետ, չի տարանջատել, թե արդյոք այն վերաբերում է բացառապես գործատուի ծանուցմանը, թե՞ նաև աշխատողի, ինչն իրենից ենթադրում է, որ տվյալ նորմը կիրառելի է երկու դեպքում էլ: Մինչդեռ թիվ ԿԴ/9539/02/22 քաղաքացիական գործով տվյալ նորմը մեկնաբանվել է այնպես, որ ծանուցումն ուժը կորցրած կարող է ճանաչվել բացառապես գործատուի կողմից աշխատողին ծանուցման մասով այն դեպքում, երբ սահմանված ժամկետում պայմանագիրը չի լուծվում, իսկ այն դեպքում, երբ աշխատողի կողմից է ուղարկվել ծանուցում գործատուին, որում հստակ նշվել է աշխատանքային պայմանագրի լուծման ժամկետ, իսկ տվյալ ժամկետում գործատուն չի լուծել աշխատանքային պայմանագիրը, ապա այն համարվում է ուժի մեջ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է մինչ գործատուն կլուծի աշխատանքային պայմանագիրը: Վերոնշյալի հիման վրա Դիմողը եզրահանգել է, որ հիշյալ նորմը ձևակերպված է այնքան թերի, որ վերջինիս հնարավոր է տալ իրար հակասող մեկնաբանություններ:

Դիմողի գնահատմամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ այն չի պարունակում որևէ բացառություն, թե արդյոք աշխատողը չի կարող դիմել դատական պաշտպանության այն դեպքում, երբ ինչ-որ ժամանակ ներ-

կայացրել է աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցում, ըստ որի չի լուծվել աշխատանքային պայմանագիրը, սակայն անցել է որոշ ժամանակ և գործատուի կողմից այն լուծվել է: Ըստ Դիմողի՝ հարց է առաջանում, թե արդյոք նման պայմաններում չի կարող խախտվել աշխատողի իրավունքն այն առումով, որ քանի դեռ գործատուն չի լուծել պայմանագիրը, աշխատողը զրկված է մեկ այլ տեղ աշխատելու իրավունքից, և արդյոք աշխատողի՝ աշխատանքից ազատվելու կամքը չի վերաբերում կոնկրետ ժամանակահատվածի:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դիմողը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 115-րդ հոդվածի 5-րդ մասը և 265-րդ հոդվածի 1-ին մասը սահմանված չեն այն աստիճանի հստակությամբ, որ դատավարության կողմերը հնարավորություն ունենան կանխատեսելու իրենց վարքագծի հետևանքները:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ (և հետագայում 13.11.2012թ. ՍԴԱՈ-80, 08.04.2014թ. ՍԴԱՈ-13, 07.04.2015թ. ՍԴԱՈ-19, ինչպես նաև 05.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-4, 18.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-5, 21.03.2016թ. ՍԴԴԿՈ/1-9, 02.04.2016թ. ՍԴԴԿՈ/1-13 և այլ որոշումներով վերահաստատված) իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «(...)

բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց (...), ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ նորմատիվ իրավական ակտի սահմանադրական կոնկրետ վերահսկողության համար վերոհիշյալ պարտադիր նախապայմանի ամրագրմամբ, ի թիվս այլնի, նպատակ է դրվել Սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնել ենթադրյալ սահմանադրականության այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և/կամ իրավական հանգամանքների գնահատման, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման, սահմանադրական նորմերի վերջնական մեկնաբանության և կիրառման հարցեր:

Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դիմողը, դիմումի հիմքում դնելով վիճարկվող դրույթների կապակցությամբ դատարանների կողմից տրված տարակերպ մեկնաբանությունները և իր անհամաձայնությունները դրանց առնչությամբ, ըստ էության, վիճարկում է դատարանների կողմից կայացված դատական ակտերի իրավաչափությունը, իսկ այդպիսի դիմումներով գործերի քննությունը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից ներկայացված այն փաստարկին, որ վիճարկվող դրույթները սահմանված չեն բավարար հստակությամբ, որի հետևանքով դրանք մեկնաբանվում են տարակերպ, Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ այդ հարցը կարող է վերաբերել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությանը, ինչը Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի գործառույթն է:

Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատա-

րանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերոնշյալ նորմի հիման վրա էլ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական պահանջները: Մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության դեպքում յուրաքանչյուր ոք կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան:

Նշված հիմքերն են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ դիմողը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների

խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է բավարար հիմնավորումներ ներկայացնի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում իր դիմումի հիման վրա գործի քննության արդյունքում՝ հիմնավորելով նաև իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Դիմումի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ դիմումում չեն ներկայացվել բավարար հիմնավորումներ վիճարկվող իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականության, դրանց հակասահմանադրականության և դիմողի իրավունքների հնարավոր խախտման միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Վարուժան Մանուկյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան

Անդամներ՝ Է. Շաթիրյան

Ս. Սաֆարյան

6 օգոստոսի 2024 թվականի
ՍԴԴԿՈ-40